ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊԸ

ԶԱՔԱՐՅԱՆ Մ. Գ.

Հայ կյանքի արդի հասարակական–քաղաքական զարգացումները, որոնք ենթադրում են գլոբալ հեղափոխական կերպափոխություններ, պատմական իրականության վերարժեքավորման և այդ իրականությունը մարմնավորող հերոսների կերպարների նորովի գնահատման առումով նորահայտ հարցադրումներ են: Թվում է՝ գլոբալ գործընթացը միաժամանակ մարտահրավեր է հայ ինքնության պահպանման համար, որին պատասխանելու նպատակով էլ անհրաժեշտ է նորովի քննել ու մեկնաբանել այն ստեղծագործությունները, որոնց մեջ հեղափոխական կերպափոխությունների ժամանակ բացահայտվել են ազգային-հասարակական զարգացման առանձնահատկությունները: Այս առումով ուշագրավ է Ավ. Իսահակյանի «Ուստա Կարոն», որը, իբրև պատմավեպ, ազգային գրականության մեջ մեծ բաց է լրացնում. եթե հայ իրականության մեջ հայրենասիրական թեմայով գրված ստեղծագործությունները ծավալվում են ընդվզման, ազգային-ազատագրական պայքարի ոգով, ապա վեպում, ի դեմս Ուստա Կարոյի, գրողը վրձնել է իրականության հանդեպ ոչ միայն զգայական, այլև զուտ բանական վերաբերմունք արտահայտող մարդու կերպար, որն իր էությամբ, մարդկային նկարագրով կարողանում է հասնել ճշմարտության և արդարության հաղթանակի ոչ միայն ընդվզմամբ և պայքարով, այլև իր բոլոր հիասթափությունները հաղթահարելով, համառությամբ ու հաստատակամությամբ: «Ուստա Կարո» վեպում հեղինակն անդրադարձել է հայ մարդու ինքնության արժեքաբանությանը, որն էլ գրողին հնարավորություն է տվել քննարկելու հերոսի ընկալումները ժամանակի ու տարածության մեջ՝ անցյալ-ներկա-ապագա ժամանակաշրջթայում:

«Ուստա Կարոն» գերսյուժե ունեցող էպոս է, որն առանձնահատուկ, նույնիսկ բացառիկ տեղ ու դեր ունի ազգային գրականության մեջ: Այն էպիկական բազմաչափ տեքստային հարթություն է, որտեղ գրողի կերտած կերպարները, պայմանավորված իրենց հարաբերական անկախությամբ, միմյանց փոխլրացնում են՝ զարգացնելով մեծ և փոքր սյուժեներ: Այդ երկուսն էլ միասին և միաձույլ վրձնելով տարբեր կերպարներ, ներառելով տարաբնույթ իրավիճակներ՝ համակարգում են պատմության հոլովույթում ձևավորված հայ մարդու էթնիկական ես-ի կերպը: Անդրադառնալով «Սասունցի Դավիթ» էպոսի ազգային հերոսների նկարագրին՝ ակադեմիկոս Հ. Օրբելին գրում է. «Էպոսի հերոսները սխրանքներ են կատարում, որովհետև այդպես է պահանջում ժողովրդի բարօրությունը… հոգու վեհության, առատաձեռնության,արիության, տառապյալին օգնելու պատրաստակամության, հայրենիքը սրով պաշտպանելու արիութ-

յան և հերոսության օրինակ են…»[1]: Ելակետ ունենալով այս մոտեցումը՝ կարող ենք նշել, որ մեծ սյուժեն Իսահակյանի մոտ ևս տրոհված է՝ հանձինս նրա կերպարների՝ Ուստա Կարո, Օրթե Հարութ, Հրեղեն… Ուստա Կարոն մարմնավորում է հայ էթնիկ ես-ին, որին լրացնում, ամբողջացնում են նաև այլ կերպարներ, որոնք ժամանակի և տարածության մեջ ուղեկցելով նրան՝ լայն հնարավորություն են ընձեռում ոչ միայն բացահայտվելու, այլև հավասարարժեք վերաբերմունք ցուցաբերելու բարոյականության և մարդկային այլևայլ արժեքների հանդեպ: Գերսյուժե ունեցող վեպի հերոսի՝ Ուստա Կարոյի կերպարը որակական տարբերություն ունի տարբեր ժամանակներում շարադրված, ազգային գրականության մեջ գերսյուժեով ծավալվող ստեղծագործություններից, քանի որ այստեղ քննարկվում և ուշադրության կենտրոնում է ժողովրդի անվտանգության ապահովման հիմնահարցը: Գերսյուժեի փաստման առումով ուշագրավ է «Սասնա ծռեր» էպոսում ոչ միայն Սասունցի Դավթի կերպարը, այլև այն բոլոր հերոսները, որոնցից յուրաքանչյուրն իր տեղն ու դերն ունի արաբական խալիֆաթի դեմ մղված պայքարում:

Գերսյուժեով է ծավալվում նաև Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպը, որի հիմքում հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարն է պարսից բռնակալության դեմ:

«Ուստա Կարո» վեպը Իսահակյանը սկսել է շարադրել 1910 թ. ապրի-լի 21-ին, Ղազարապատում: Նրա առաջին էջում գերմաներեն գրված է՝ *“Meister Karo” ein humoristischer Roman aus dem armenischen Volks leben* («Ուստա Կարո» երգիծական վեպ հայ ժողովրդի կյանքից), այնուհետև՝ «Ուստա Կարո և Օրթե Հարութ»:

Վեպն ունի նաև բնաբան՝ հեղինակի կողմից ջնջված. «Ամեն հայ փոքր-ինչ Ուստա Կարո է»: Ստեղծագործության շարադրման ընթացքի մասին ուշագրավ տեղեկություններ կան Վ. Աբովյանին ուղղված նամակում. «… սկսել եմ մի մեծ վեպ, որ հավատացնում եմ, հանճարեղ բան է. մինչ այժմ այդպիսի բան… ոչ մի մարդ չի գրել …«Աբու-Մահարին» նրա մի գլուխը չարժե… Մինչև մայիսի վերջը կլինի բոլորովին պատրաստ»[2]: Վեպի առաջին տարբերակը գրողը ավարտել է 1912 թ. հունվարի 19-ին, որը «…անաղարտ ձեռագրով պահպանված մնաց գրողի արխիվում»[3]: Հայ քաղաքական կյանքի հետագա փոթորկալից իրադարձությունները, սակայն, գրողին ստիպեցին արմատապես վերափոխել այն, և այս է հավաստում Գ. Լևոնյանին ուղղված նրա նամակներից մեկը. «Ուստա Կարոն» երկուշաբթի օրվանից սկսում եմ ամբողջը նորից գրել, մշակել… Շատ ծանր աշխատանք է այդ «Ուստա Կարոն». 500 երես նորից գրել, անթիվ նյութերս նորից քրքրել, տող-տող սրբագրել, ուղղել, հղկել, մշակել» (V|, 129): 1924 թ. Վ. Ահարոնյանին ուղղված նամակում հեղինակը

[1] **Սասունցի Դավիթ,** Հայկական ժողովրդական էպոս, Ե., 1961, նախաբանը՝ ակադ. Հ. Օրբելու, էջ xl:
[2] **Իսահակյան Ավ.,** Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Ե., 1979, էջ 97, 98:
[3] **Իսահակյան Ավ.,** Ուստա Կարո, տեքստը կազմեցին Ավիկ Իսահակյանը և Անահիտ Վարդանյանը, առաջաբանի հեղինակ՝ Սարինյան Ս., Ե., 2006, էջ 14: Այսուհետև այս գրքից մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

անդրադառնում է նաև վեպի վերաշարադրման արմատական պատճառներին. «…Այս վեպը ուղղակի պատիժ դարձավ գլխիս. գրել էի, վերջացրել, նորից փոխում եմ… վերագնահատում ի տես բոլոր սնանկությանց, որոնք եղած են մեծ պատերազմի ընթացքին և հետպատերազմի շրջանում – սնանկություն պետությունների, դեմոկրատիայի, կոմունիզմի, հումանիտեի և այլն – այն ամբողջ ապրումները, որ ունեցա, պիտի բյուրեղանան Ուստա Կարոյի և Օրթե Հարութի մեջ. դա է վեպս, որ հիմքում փիլիսոփայական է և գերազանցապես ազգային հայկական»[4]: Վեպի երկ-րորդ տարբերակի ստեղծման մտահղացումից անցել է շուրջ 98 տարի, սակայն այդպես էլ այն մնացել է անավարտ:

Գերսյուժեի սկզբունքները վեպի էպիկական հիմքին աղերսելով՝ Իսահակյանը «Ուստա Կարո» վեպում փորձում է իր կերտած կերպարների խտացված գործողություններով դիտարկել և քննել հայ իրականության արժեքաբանությունը: Ուստա Կարոն ստեղծող, արարող հայ մարդն է՝ մտահոգված իր երկրի ազատության, ժողովրդի կեցության խնդիրներով, հարևանի հետ ունեցած հարաբերություններով: Վեպը հայ գրականության մեջ միակ գերսյուժե ունեցող երկն է, որի կենտրոնական առանցքը ժամանակի և տարածության մեջ քննվող հայ մարդն է, որը պետք է հաղթահարի կյանքի դժվարությունները, իր կյանքն ապրի ստեղծումով, արարումով, և հանուն դրա էլ նա ոչ միայն պետք է պայքարի, այլև համակեցություն ապահովի:

Վեպի հերոսը՝ Ուստա Կարոն, բազմաչափ ու բազմամակարդակ կերպար է, և այս հերոսի ճիշտ մեկնությունը հնարավորություն կընձեռի բացահայտելու դարերի ճամփորդի՝ հայ մարդու բնավորության, հոգևոր կերտվածքի առանձնահատկությունները: Այս առումով էլ Ուստա Կարոյի կերպարը նորություն է և առանցքային նշանակություն ունի ժողովրդի կենսունակության, հոգևոր ներուժի բարձրացման համար: Այս խնդիրը արդիական է նաև այսօր՝ ներկա իրականության մեջ, քանի որ այժմ ևս մարտահրավեր է նետված հայ մարդուն՝ դիմակայելու իր ինքնության դեմ ուղղված բոլոր այն մարտահրավերներին, որոնք նրան կդարձնեն կենսունակ՝ հզոր հայրենիքի կերտման գործում:

Հայ ժողովրդի կեցության համար անվտանգության ապահովման մտորումներում, ազգային պատմությանը քաջատեղյակ և ժողովրդի ապագայի համար անհանգիստ Իսահակյանը տասնամյակներ ի վեր վրձնում է Ուստա Կարոյի կերպարը՝ ներկայացուցիչը արհեստավորական խավի, որովհետև վստահ է , որ ժողովուրդն իր անվտանգ կեցության և գոյատևման խնդիրը պետք է առնչի աշխատող, ստեղծող, արարող ես-ին: Ուստան հենց այդպիսի բազմաչափ հայ մարդու կերպար է, որը ներառում է ազգա-յին կյանքի անցյալն ու ներկան, ապրում է ներկայով և կամրջում ապագան: Այս առումով էլ նա իդեալական կերպար է: Իր մականունը՝ Ուստա, միաժամանակ գալիս է փաստելու յուրաքանչյուր հայի, որ նա՝ որպես տեսակ, ինքնահաստատվում է միայն աշխատանքով, այն էլ մի այնպիսի աշխատանքով, որի համար տրվում է «Վարպետ»

[4] Ավ. Իսահակյանի նամակները, Գահիրե, 1959, էջ 114:

պատվանունը[5]: Կնշանակի՝ բանիմաց մի մարդ, որն ինքնարարումով կա-ռողանում է շրջապատի գոյության համար պատասխանատու զգալ իրեն և համակեցության կանոններ թելադրել: Ուշագրավ են հատկապես պետության մասին հույն մեծ իմաստասեր Պլատոնի բնորոշումները: Համաձայն անտիկ մեծ փիլիսոփայի՝ պետության մեջ մտնում են հետևյալ խավերի անձինք՝ ոսկե, արծաթե և երրորդը՝ բրոնզե կամ հողե: Այս վերջինը ոչ միայն մեծ թիվ է կազմում, այլև հասարակական կեցության գրավականն է, իսկ ոսկե և արծաթե արյան տեր մարդիկ չնայած որ քիչ են, սակայն նրանք են կանոնակարգում պետության օրենքները: Նրանք իմաստասերներն ու զինվորականներն են. «…ազնիվ նկարագրի մարդիկ պաշտոնավարում են, երբ ցանկանում են իշխել…»[6]: Սակայն առանց սոցիալական ցածր խավի՝ արհեստավորների, երկրագործների, զինագործների, ասել կուզի՝ աշխատավորների, պետությունը գոյատևել չի կարող: Հայաստանը զուրկ էր պետա-կանությունից. Արևելյան Հայաստանը ցարական Ռուսաստանի գաղութն էր, իսկ Արևմտյանը՝ հեծում էր օսմանյան լծի տակ, և վեպի համարյա բոլոր հերոսներին մտահոգող հարցերի հարցը Հայաստանի և հայ ժողովրդի գոյատևումն է. ինչպիսի՞ն կլինի պետականությունից զուրկ երկրի վաղվա օրը, ի՞նչ է նրան սպասվում: «Ուստա Կարոն» ընդգրկում է XIX դարավերջը և XX դ. 10-ական թվականները: Սա մի ժամանակաշրջան էր, երբ քաղաքական զարգացման մեջ աշխարհի հզորները չարաշահում էին հատկապես թվաքանակով փոքր ժողովուրդների դյուրահավատությունը, ուստի և Ուստա Կարոյի կերպարով վեպի սյուժետային զարգացման մեջ գրողին զբաղեցրել է ժողովրդի գոյատևման ուղիների փնտրտուքը: Հեղինակը սթափ գիտակցում է, որ դժվար է պետականազուրկ հայ ժողովրդի ինքնակազմակերպումը, քանի որ հզոր տերությունները խոչընդոտում են ազգային պետության ստեղծումը: Վեպի էպոսային կերպարների հանգամանալից ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ, անկախ ժամանակի անդրադարձից, Իսահակյանին զբաղեցրել է հայ հասարակության ինքնակազմակերպման, ինքնակառավարման խնդիրը. ինչպե՞ս գոյատևել առանց պետության: Իրեն հուզող հարցերի բանական լուծումը հետևյալն է. հայ հանրությունը կարող է գոյատևել աշխատանքով, արարումով, բայց այնպիսի աշխատանքով, որով ոչ թե մի կերպ գոյատևի՝ ծայրը ծայրին հասցնելով, այլ կարողանա օգտակար լինել իր շրջա-պատին, մոտ և հեռու հարևաններին[7]: Նման մտայնությամբ էլ նա՝ հայ մարդը, աշխատանքի անվերապահ նվիրումով, բարոյական հրամայականով միայն կարող է նպատակամետ

[5] Ավ. Իսահակյանին «Վարպետ» պատվանմամբ կնքել է Եղիշե Չարենցը:

[6] Պլատոնի հանրապետությունը, Ե., 1940, էջ 36:

[7] Այս առումով ուշագրավ են գերմանացի փիլիսոփա Էմ. Կանտի՝ հայ գենի դիտար-կումները. «…մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մեջ իշխում է ինչ-որ հատուկ տեսակի առևտրային ոգի… նա հյուսիս արևելքից մինչև հարավ-արևմուտք ուղղությամբ անցնում է գրեթե ողջ Հին աշխարհը և կարողանում գրկաբաց ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է. դա ապացուցում է նրանց բնավորության (որի նախնական ձևավորումը մենք արդեն ի վիճակի չենք հետազոտել) գերազանցությունը ներկայիս հույների բնավորության համեմատ» (**Кант Им.,** *Собрание сочинений, т. 6, 1966, с. 534).*

դուրս գալ բոլոր տեսակի ճգնաժամերից: Ճիշտ է, որ բոլոր դեպքերում էլ մարդուն գրավում է նյութի աշխարհը, սակայն Ուստա Կարոն՝ կոլորիտային այդ հերոսը, նյութականը ստեղծում է ոգեղենի հիմքի վրա:

Վեպում Իսահակյանին հուզում է հայ հասարակության, հայի տեսակի գոյաբանության հիմնախնդիրը, ուստի, թվում է՝ հեղինակը, իրականությունից վեր բարձրանալով՝ փորձել է կոնկրետացնել նաև հայի գոյատևման համար տարածական կեցության առումով անհրաժեշտ և գոյաբանական առումով անվտանգ աշխարհագրական տարածքը: Այդ ժամանակ Շիրակի հարթավայրից մինչև Նախիջևան բանուկ ճանապարհներ էին անցնում՝ Ալեքպոլ, Ագուլիս, Ղարաբաղ, իսկ մեջտեղում՝ Երևանը: Սա Ուստա Կարոյի շարժման հետագիծն է, որը հայ, քուրդ, թուրք բնակչության հետ կապ էր ապահովում: Իսահակյանը այս տարածաշրջանն է քննարկում, քանի որ այն վեպի հերոսների բնակության վայրն է՝ աշ-խարհագրական առումով հենասյուները՝ Ղարաբաղ, Շիրակ, Սևանի ավազան, Արարատյան դաշտ: Գրողը կանխավ հասկացել է, որ տարածքային այս ամբողջության մեջ կարող է հայ ժողովուրդը գոյատևել: Ադրբեջանը այս ժամանակ չկար, և գրողին մտահոգում էին թուրք-թաթարական միավորման եզրերը: Տարածքը աշխարհագրական առումով՝ կարևոր հենակետեր է ընդգրկում և ժողովրդագրական աճ ապահովում իր բնական ռեսուրսներով՝ ջրային, հողային, բանուկ ճանապարհներ, որոնք հնարավորություն կտան հայ մարդուն շարունակել իր լայն շփումները Մերձավոր Արևելքի, Ռուսաստանի, Իրանի հետ՝ քաղաքակրթական խաչմերուկներում կառուցելով Հայոց Տունը: Իսահակյան քաղաքագետը գերազանց հասկանում էր եվրոպական և ռուսական աշխարհաքաղաքական շահերը. կովկասյան թաթարների բնակավայրը՝ Բաքուն, հարուստ նավթային կենտրոն էր, և թաթարները կկարողանային իրենց համար պետություն ստեղծել, և այդ ժամանակ հայ մարդը իր անվտանգության խնդիրը ինչպե՞ս պետք է լուծեր: Արդյոք կկարողանա՞ր ինքնակազմակերպել իր տեսակը՝ պետության ստեղծման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով: Այստեղ, թերևս հարկ է հիշել, թե ինչ էր հասկանում հեղինակը՝ հայրենիք ասելով. «Ի՞նչ է հայրենիքը. նա հողն է և արյունը: Արյունը շաղախված է հողի հետ, կաղապարում է ազգությունը, ցեղը, լեզուն, մշակույթը»[8]:

Գրողը վեպում հայ մարդու սոցիալ-քաղաքական ժամանակն է ուսումնասիրում և նրա համար անվտանգ կեցության ստեղծման արժեքային կողմնորոշիչներն ու եզրերը ի մի բերելով՝ եզրակացնում, որ հայը միայն մնայուն արժեքի արարումով է, որ ի զորու է գոյատևելու իր հայրենիքում՝ բարոյական, մարդասիրական հրամայականով առաջնորդվելով: Նկատի ունենալով Ուստա Կարոյի և Չավուշի և տվյալ տարածքում բնակված եզդիների ու քրդերի բարեկամության եզրերը՝ գրողը ակնկալում էր տիրույթում համընդհանուր հանդուրժողականություն և միասնական արարում: Պատմական Հայաստանի տարածքը հեղինակն արդեն միաէթնիկ չէր դիտում. այնտեղ քրդեր, եզդիներ, թուրքեր կային:

---

[8] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Իսահակյանի արխիվ, 296 – || , էջ 23:

«Ուստա Կարոն» անավարտ վեպ է և, որպես այդպիսին՝ ամբողջական ու տրամաբանական, քանի որ դա երևում է կերպարների փոփոխական արժեքային կողմնորոշումներում. Իսահակյանը տարբեր քաղաքական ժամանակներում է անդրադարձել վեպի հենք հանդիսացող իրադարձություններին՝ հերոսին տալով իր ժամանակի անցքերը մեկնաբանելու հնարավորություն, և նույն հերոսը տարատեսակ ժամանակներում տարբեր կերպ է ընկալում այն ժամանակը, որում ինքը ապրում է: Սակայն, կարծում ենք՝ այդպիսի բազմաչափության մեջ այդ կերպարներն ունեն իրենց գոյաբանության առանձնահատկությունները. այսպես՝ նրանցից յուրաքանչյուրը, իր կերպարի յուրօրինակություններից ելնելով, ցանկանում է երկխոսության մեջ մտնել՝ իր տեսակի առանձնահատկություններով պայմանավորված: Ներքին ես-ը պատրաստ է հարաբերվել արտաքին միջավայրի հետ. նա մերժողական վերաբերմունք չի ցուցաբերում, ավելին, ձգտում է վճռել իր ապահովության և կեցության խնդիրները: Ելակետ ընդունելով այս կողմնորոշումները՝ կարծում ենք, որ «Ուստա Կարոն» չնայած անավարտ է, սակայն իր կերպարների էպիկականությամբ, կյանքի հանդեպ ունեցած բազմաչափ վերաբերմունքով հայ մարդուն հնարավորություն է տալիս այլընտրանքային զարգացումներ մշակել՝ սեփական ես-ի անվտանգությունը և բարեկեցությունը հիմք ընդունելով: Իսահակյան գրողի համար սա է կարևորը վեպում. «Եկավ մեկնումի պահը: Արարողությունն ավելի քան հանդիսավոր էր: Ամբողջ համայնքը շարժման մեջ էր՝ ներշնչված ինչպես հերոսի առաքելության ազգափրկիչ հովերով, նույնպես և անդարձության ափսոսանքի ցավագին զգացումներով. «Չոզկի, չվայելե Կայծակը, մեկ էլ վոշիկների գաղթականները: Քավորիս խելքը գողացան, հոդ-հոդ հանեցին ու գյուլլի բերան են ղրկում»: Բայց դրանք Ուստա Կարոյի համար սոսկ սենտիմենտալ զեղումներ են, և ինքը գիտի իր առաքելության խորհուրդը» (էջ 296): Իսկ Ուստա Կարոյի առա-քելական խորհուրդն է՝ արարել, ստեղծել, և իր շրջապատին նա սովորեցնում է, թե ինչպես պետք է գեղեցիկ ապրել՝ դիմակայելով կյանքի դժվարություններին: Ոչ թե ողբը, այլ լավատեսությունն է, որ Կարոյին (ՀԱՅ ՄԱՐԴՈՒՆ - ընդգծումն իմն է՝ Զ. Մ.) հնարավորություն է տալիս փյունիկի նման վերածնվել:

Ողբերգականը չմերժելով հանդերձ՝ նա փորձում է իմաստնացնել հայ մարդուն: Դարերի բազմաշերտ հոլովույթով անցած հայի մի տեսակ է Ուստա Կարոն, հերոս, որի պատմական հիշողությունը պարուրաձև ընթացք ունի. այն ներառում է պատմական ժամանակը և տարածությունը, և այս առումով էլ վեպն անհրաժեշտ է դիտարկել կառուցողական և ապակառուցողական իրականության, զավթիչների դեմ մղած հերոսական պայքարի, համակեցության կանոնների պահպանման, աշխատավոր հայի գոյաբանական մի այնպիսի հիմքի վրա, որը հնարավորություն է տալիս լավատեսորեն նայել ապագային: Մեծ փորձությունների միջով անցած Ուստա Կարոյի կերպարը կարծես մարմնավորում է այն սոցիալ-քաղաքական ժամանակի և տարածության մեջ ապրող մարդուն, որը կարողացել է գերագույն կորուստներով հասնել ապագայի՝ միայն իր աշխատասիրությամբ և մեծ կենսասիրությամբ: Ուստա Կարոյի կերպարում արժեքավորը ոչ միայն լավատեսությունն է, իր կյանքը մաքառումներով ապ-

րելու և արարելու տենչը, այլև գերագույն նպատակը՝ կյանքը որպես արարում ընկալելը. չէ՞ որ դա իշխելու մարմաջ չէ:

Այս հերոսը փիլիսոփայորեն է վերաբերվում իր անձի հանդեպ ցուցաբերված անհանդուրժողականությանն ու դավաճանությանը: Վեպում հաճախ իրականը հորինվածքի հետ է ներկայանում. էպիկական դեպքերը ձուլվում են իրականի և երևակայականի աշխարհում: Նա պատմական հիշողությամբ մարմնավորում է հայ մարդու կերպարի և՛ իրականի, և՛ առասպելականի փոխհարաբերությունը, իսկ Պլոյի հետ նա հարաբերվում է Կարս մեկնելու և հեղափոխական գործունեության առնչությամբ: Կարոն՝ հայրենիքի և ժողովրդի ազատության համար պատրաստ, Կայծակի նամակով մեկնում է թագավոր Պլոյի մոտ՝ Ղարս: Սակայն Պլոն, նրան համարելով գործից բացարձակապես անտեղյակ մարդ, որն ընդհանրապես գաղափար չունի քաղաքական իրավիճակի մասին, նամակ է ուղարկում «Նախճվանի ՀՅԴ ենթակոմիտեին»՝ մատնացույց անելով Կայծակի անխոհեմությունը և կարգադրում Ուստա Կարոյի հեղափոխական գործունեությունը դադարեցնել: Նրան վտարում են ՀՅԴ-ի շարքերից: Նամակի ընթերցումից կաթվածահար՝ գյուղի բնակիչների մի մասը վրեժխնդրության զգացումով է լցվում Ուստայի դեմ: Վերջինիս թվում է, թե գոնե Օսկանը սատար կկանգնի իրեն, բայց՝ ապարդյուն. Կարոյին գյուղից վտարում են, և հերոսի հոգում փլուզվում է երազը՝ տեղը զիջելով դաժան իրականությանը:

«Ուստա Կարոն» Ավ. Իսահակյանը սկսել է շարադրել «Աբու-Լալա-Մահարի» պոեմից հետո, և այս առումով ուշագրավ են այս ստեղծագործությունների հոգեբանական աղերսները. Աբուն գնում է անապատ՝ կյանքից հիասթափված, սակայն կյանքի հանդեպ սերն ու խորհրդավորությունը նրան կարող էին հետ բերել անապատից: Հերոսի ընդվզումը աշխարհի ու կյանքի դեմ հիմնականում սոցիալական և հանրային կյանքի անարդարությունների դեմ էր ուղղված: Այստեղ ուշադրություն է գրավում հետևյալ հանգամանքը. ծագումով արաբ փիլիսոփան իմաստնացել է իր ինքնադրսևորման մեջ, և հեղինակը փորձել է տարաբնույթ արժեքների հարթության վրա ինքնահաստատվող, ինքնահիրացվող, ինքնաարդիականացող կերպար ստեղծել՝ ի դեմս Ուստա Կարոյի, որի միջոցով հնարավոր կլինի բացահայտել հայ մարդու զարգացումը՝ իր արտաքին և ներքին դրսևորումներով: Եթե Աբուն արաբ է, և այդ իմաստությունը հեղինակը արաբի միջոցով է ներկայացնում, ապա Ուստա Կարոյի կերպարային առանձնահատկությունն այն է, որ նա հայ է, և հեղինակը հայ մարդու աշխարհայացքով է ասելիքը շարադրում. «Ուստա Կարոյի մոտ պիտի գտնես այն բոլոր մտքերը, որ ինձ հուզում են, հուզել են. ազգ, հայրենիք, ազատություն, կուլտուրա, պատերազմ, Աստված, Տիեզերք, նյութ, ուժ, կին, սեր, մորալ, մարդ, մահ և այլն, և այլն»,- գրում է նա իր նամակներից մեկում[9]: Հեղինակը պատասխանատվության մեծագույն զգացումով է կերտել այս հերոսի կերպարը, ժամանակի ընթացքում բյուրեղացրել նրա արժեքային կերպը, ուղղվածությունը, և այդ են վկայում ոչ միայն նրա՝ Գ. Լևոնյանին ուղղված նամակի տողերը, այլև բազ-

[9] **Իսահակյան Ավ.**, Նամակներ, Գահիրե, 1959, էջ 29:

մաթիվ գրառումներ: Այսպես, դրանցից մեկում Իսահակյանը տարիների, տասնամյակների հետ, անդրադառնալով *Ուստա Կարո* կերպարի առանձնահատկություններին՝ գրում է. «Շարունակ մտածում եմ Կարոյի տիպի մասին և վերջնական ձևին չեմ հասել: Ինձ թվում է, որ առաջին հղացման կերպարը ամենից մոտն է և հոգեբանական համոզիչ, ռեալական: Կարոյին չի կարելի շատ զգաստ, խոհուն փիլիսոփա դուրս բերել, միևնույն ժամանակ անհամոզիչ դեպքերի ականատես, մասնակից… Շատ լուրջ Կարոն չի կարող անգիտակցորեն ենթարկվել ֆանտազիաների և հավատալ չարած, չեղած բաների: Պետք է միջինը վերցնել և կամաց-կամաց Ուստին բարձրացնել: Բայց պետք է պահել նրա հումորը, սրախոսությունը, միամտությունը, բարությունը, շուտ բորբոքվելը, տաքարյունությունը, դյուրագրգիռ լինելը, շատախոսությունը, հնարամտությունը, անմիջականությունը… իրականության լավ, խորունկ չըմբռնելը»[10]: Ուստա Կարոյի կերպարում Իսահակյանն ամբողջացրել է XIX դարավերջի և XX դարասկզբի հայ սոցիալ-քաղաքական կյանքի զարգացման այն հատկանիշները, որոնք մրցունակ կդարձնեն նրան անվտանգ գոյատևման համար: Այս առումով ուշագրավ է գրականագետ Ս. Սարինյանի դիտարկումը. «Ուստա Կարո» վեպը Իսահակյանը գրել է «Աբու-Լալա-Մահարիից» անմիջապես հետո, և այստեղ անշուշտ գործել է հոգեբանական որոշակի դրդում: «…«Ուստա Կարոն» «Աբու-Լալայի» «բացասումն է» բառիս փիլիսոփայական իմաստով: Դա վերադարձ էր, վերադարձ դեպի սկիզբը… Այսինքն՝ վեպում Իսահակյանը վերադարձնում է բոլոր այն արժեքները, որոնցից հրաժարվում է պոեմի ռոմանտիկական փախուստի հերոսը»[11]: Անդրադառնալով վեպի հերոսներից մյուսին՝ Չավուշի ազգությանը, գրականագետը հավաստում է. «Չավուշի՝ ազգությամբ թուրք լինելը պայմանավորված էր դաշնակցական գաղափարախոսությամբ…որն իր պարզած դրոշի տակ էր կոչում … նույն հողի վրա ապրող քյուրդերը, թուրքերը, եզտիները և այլն»[12]: Տարիների հետ Իսահակյանի գրառումներում գտնում ենք հետևյալ խոստովանանքը. «Դաշնակցությունը կուզե մեր հարևան ժողովրդի հետ մեզի դաշնակցե, ծիծաղելի քարոզ, անհեռատեսություն»[13], այլ դեպքում՝ «Այս ահավոր կոտորածներից հետո և այն դարավոր ճանապարհը թուրքի հետ միասին անցնելուց հետո անկարելի է դաշնակցել, եղբայրանալ թուրքի հետ»[14]:

Ավ. Իսահակյանը վեպի վերնագրից հետո, ինչպես նշվեց, ստեղծագործական զուգահեռներ է նշել Ալֆոնս Դոդեի հետ: Ե. Չարենցը, վեպին անդրադառնալով, գրել է. «Դա օվկիանոս է, վեպ չէ… հավասար Դոն Քիշոտին»[15]: Սակայն, թվում է, «Ուստա Կարոն» աղերսներ ունի նաև Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել» վեպի հետ: Ինչպես հավաստում է ռուս գրականագետ Մ. Բախտինը, «Ռաբլեին հայտնագործած ռոմանտիկ-

---

[10] ԳԱԹ, Ավ. Իսահակյանի արխիվ, 363- ||, էջ 1-2:
[11] **Իսահակյան Ավ.,** Ուստա Կարո, էջ 15-16:
[12] **Վարանդյան Մ.,** Հ.Յ.Դաշնակցության պատմություն, Ե., 1992, էջ 105:
[13] ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, 298, էջ 2:
[14] Նույն տեղում, 326, էջ 13:
[15] **Իսահակյան Ավ.,** Ուստա Կարո, էջ 16:

ները, որոնք հայտնագործեցին Շեքսպիրին և Սերվանտեսին, չկարողացան, սակայն, բացահայտել նրան և ոգեշունչ զարմանքից այն կողմ չանցան… Ռաբլեի կերպարներին բնորոշ է ինչ-որ սկզբունքային և անբնաջնջելի պաշտոնականություն. ո՛չ մի դոգմատիզմ, անառարկելի հեղինակություն, ո՛չ մի միակողմանի լրջություն չի կարող համեմատվել ռաբլեական կերպարների հետ, որոնք հակառակ են որևէ ավարտունության և կայունության, որևէ լրջության, պատրաստվածության և որոշվածության՝ մտքի և աշխարհայացքի բնագավառում: Այստեղից էլ՝ Ռաբլեի առանձնահատուկ միայնությունը հաջորդ դարերում. նրան չի կարելի մոտենալ այն մեծ և տրորված ճանապարհներից որևէ մեկով, որոնցով ընթանում էին բուրժուական Եվրոպայի գեղարվեստական ստեղծագործությունը և գաղափարական միտքը՝ նրան մեզնից բաժանող չորս դարերի ընթացքում»[16]: Ռաբլեն փոխեց կերպարի կերտման չափանիշները. նա վրձնեց հերոսներ, որոնք իրականության, իրավիճակի ընկալման առումով՝ վարքաբանությամբ պայմանավորված, արագ կարողանում են կերպափոխվել՝ ապահովելով իրենց ես-ի անվտանգությունը, և այդ իմաստով էլ նրա կերպարները տարբերվում են Շեքսպիրի և Սերվանտեսի հերոսներից: Վերջիններս նեղացնում էին իրենց հերոսների կերտման շրջանակները, մինչդեռ Ռաբլեի կերպարները, խիստ բազմաչափ են, ասես. «լողում» են իրականության սոցիալ-քաղաքական, հասարակական արժեքային համատիրույթներում:

Ռաբլե-Իսահակյան զուգահեռները «Ուստա Կարոյում» հիմնավորելու համար կարելի է փաստել նաև հետևյալ հանգամանքը. նրանք երկուսն էլ խորապես ուսումնասիրել են ազգային ավանդույթները, բանահյուսությունը, իրենց ժողովուրդների հազարամյա պատմության հոլովույթում ձևավորված գրական վաստակը: Ուստա Կարոն մարմնավորում է դարերի մշուշից եկող իր ժողովրդի զավակի՝ հայ մարդու ես-ը՝ տարբեր ժամանակահատվածներում: Ե՛վ Ռաբլեն, և՛ Իսահակյանը դիմել են արտառոց-ֆանտաստիկ նկարագրությունների, ինչպիսին «հնդկական հրաշքներին» առնչվող լեգենդներն ու գրական հուշարձաններն են: Խոսքը վերաբերում է Հնդկաստանի հեքիաթային հարստություններին, բացառիկ բնությանը, երևակայական հրաշքներին՝ հրացայտ դևեր, կախարդական անտառներ, երիտասարդություն պարգևող աղբյուր, իրական կենդանիների կողքին թևավոր վիշապներ, օձեր, թզուկներ, հսկաներ, գիշատիչ թռչուններ, խառը մարմնի կերպարների մի ողջ պատկերասրահ, որոնց մարմնի մի կեսը կենդանու է, մյուս կեսը՝ մարդու:

Իսահակյանը հայ գրականության մեջ առաջին անգամ իր կենսունակությամբ փորձում է քննադատաբար վերաբերվել իր և շրջապատի ապրած կյանքին, և դա է պատճառը, որ վեպն այդքան հարուստ է խրախճանքի, ուրախության, երգիծանքի տեսարաններով՝ հյուրասիրություն, ամուսնություն, կնունք, տարբեր առիթներով գյուղացիներից յուրաքանչյուրի համար կառուցած աղբյուր, փորած հորի կամ տան վերանորոգման առիթով կազմակերպված խնջույք, քեֆ և ուրախության նկա-

[16] **Бахтин М. М.,** *Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и ренессанса, М., (б. г.) с. 322.*

րագրություններ: Քեֆը՝ խնջույքը, ամենահարմար միջավայրն է՝ բացարձակ անվախ և ճշմարիտ խոսքի համար: «Հեռվում՝ ծառների տակ, օջախն էր բոցկլտում երեք քարի վրա. եփվում էր բոզբաշն ու փլավը. մի երկու տղա էլ խորոված էին շարում: Ամեն մի սեղանակցի աջ կողքին դրված էր գինով լիքը մի-մի գավ, ամենի առաջ՝ կավե գավաթներ, կերակրի սաքսոններ, հաց, կանաչի և ուրիշ բաներ» (էջ 44): «Է՛յ, է՛յ, ինչ կենեք, արաղը պաղավ, քույրիկնե'ր, չարազը պարպավ, ի՞նչ եք իրար գլուխ ժողվել,- գոռգոռաց Օսկանը և արաղ լցրեց, սրան-նրան տվեց: Զինվորներին մեծ-մեծ բաժակներով տվեց և ստիպեց, որ երգեն…» (էջ 432): «Կուշտ-մուշտ չկա… էն իրիկուն էր, որ կերաք, հիմա գիշեր է, անոթցած կէղնիք… սուփրա գցեք, կամաց-կամաց մանր-մանր աղանք ու մեզի համար խոսենք: …Սեղանը բացին: Երիտասարդները կրում էին սաքսոններով կերակուր և դարսում հյուրերի առաջ: - Պա՛հ, պա՛հ, հաստատ, որ հարսնիք է, էսքան էլ բան էղնի: Կարո ախպեր, ինչ անեմ, չմնացիր՝ Արտաշիս կարգեի էդոր համար էլ քու փայ հարսնիքը հիմի կէնենք» (էջ 433): Ուստա Կարոյի կերպարը և՛ երկրային է, և՛ երկնային. նա մարդ է իր բոլոր մարդկային թերություններով, բայց և օժտված է մեծ կենսասիրությամբ: Նա միաժամանակ ռոմանտիկ կերպար է, քանի որ սովորական մարդը չի կարող լինել ոչ Գարգանտյուա և Պանտագրյուել, ոչ էլ Ուստա Կարո:

Վեպն ուշագրավ է նաև հեղինակային ուրույն ենթատեքստերով: Այսպես՝ Իսահակյանի վեպը բացվում է գործող հերոսների բնակավայրի՝ Կամսարական աշխարհի նկարագրությամբ: Ի սկզբանե գրողը նկարագրում և գնահատում է այն վայրը, որտեղ տարածական առումով պետք է տեղի ունենան վեպի հետագա գործողությունները: Ահա Երվանդաշատի ավերակները. «Կամսարականների պատմական աշխարհը, Բագրատունիների, Շիրակի հարավային մասը… Հյուսիսային կողմը ընկած է Անին: Արևելյան կողմը ուղղաձիգ՝ հյուսիսից հարավ… հոսում է Ախուրյանը և Բագարանից ներքև թափվում Երասխի մեջ՝ Երվանդաշատի ավերակների վրա, Կարմիր ապառաժի տակը: Արևմտյան կողմը նստել է Ալաճայի շարունակությունը՝ Յաղլճվա լեռը: Այդ բարձրավանդակից երևում են Կաղզվանի և Կողբա լեռների շղթան, Հայկական պարը, ձյունափառ Մասիսը, Արարատյան դաշտը և լայնանիստ Արագածը: Անմարդաբնակ է այդ ահագին տարածությունը, որի վրա կան մի երկու տասնյակ գյուղեր: Ժողովուրդը բացառապես կազմում են հայերը, քրդերը և եզդիները» (էջ 39): Հեղինակն այստեղ կարևորում է երկու տասնյակ գյուղերում հայերի հետ հարևանությամբ ապրող քրդերի, եզդիների գոյությունը: Մի կողմից՝ Երվանդավանի ավերակներն են, այսինքն՝ պատմական ժամանակը կանգ է առել, մյուս կողմից՝ Շիրակի, Արազի նկարագիրն է: Թվում է՝ ի սկզբանե հերոսների կերպարներին չանդրադարձած՝ ընթերցողը ականատեսն է դառնում այնպիսի մի բնապատկերի, որը խորհրդանշում է, մի դեպքում՝ պատմական Հայաստանի ավերակները, այլ պարագայում՝ հարահոս փոփոխությունների ենթարկող ժամանակը, մյուս դեպքում՝ արդեն այդ տարածքում ապրող տարբեր ազգությունների մարդկանց, որոնք, ինչպես վկայում է վեպի հետագա շարադրանքը, կողք կողքի ապրելով, անկախ ազգային պատկանելությունից, ի մի են բերում մարդու

պերճանքն ու աղքատությունը: Վեպի առաջին գլխում հեղինակը խորհրդապաշտական ամբողջության մեջ ներկայացնում է մարդ-բնություն հարաբերությունները. մարդը, անկախ ազգությունից, բնության մասնիկն է: Վեպի Ա մասում կատարվող գործողությունների «առարկան» բնությունն է: Թվում է՝ առաջին գլխի վերնագիրը՝ «Կամսարականների աշխարհը. Ուստա Կարոյի և Մահմուդ Չավուշի գործելավայրը», և ընդհանրապես ողջ վեպը խորհրդանիշների և միֆերի համակարգ է: Գրողը նկարագրում է այն տարածքը, որի վրա իշխել են Կամսարականներ-Արշակունիներ-Բագրատունիները. «Կամսարականների պատմական աշխարհը, Բագրատունիների Շիրակի հարավային մասը… նրա հարավային կողմը արևմուտքից արևելք, անդնդային Արշարունյաց կամ Երասխաձորն է ձգվում՝ կամուրջներ չհանդուրժող Երասխով: Այդ վայրենի ապառաժը, բարձրաբերձ ժայռերի ծերպերի մեջ վայրի աղավնիները և մեղուներն իրենց բույնն ու փեթակն են հյուսել» (էջ 39-40):

Մ. Խորենացին, անդրադառնալով Արշակ թագավորի և հայոց Կամսարական նախարարի հարաբերություններին, գրում է. «Երբ մեծ Ներսեսը հեռացավ, Արշակը դրժեց բոլոր պայմանները, որ կնքել էր նախարարների հետ և կամեցավ իր Արշակավան դաստակերտի վրեժը հանել: Նա կոտորեց նախարարներից շատերին, մանավանդ բնաջինջ արեց Կամսարականների ցեղը, ագահելով Արտագերս ամրոցին և Երվանդաշատ քաղաքին, որ նրանց ոստանն էր: Նրանց հրավիրեց իր մոտ, Արմավիրի լքված պալատը, իբրև ազգականների, պատվելու մեծամեծ պատճառանքով, և հրամայեց բոլորին միանգամից կոտորել՝ մարդկանց, կանանց, երեխաներին»[17]: Ասել կուզի՝ պատմահայրն ի սկզբանե քննարկում է այն ռեալ ժամանակն ու տարածությունը, որը Կամսարականներին է պատկանել: Նրանք իրենց պատկերացումներն ունեին Հայաստան երկրի անվտանգ կեցության վերաբերյալ, որն անհարիր էր Արշակունիների պատկերացումներին, և Արշակավանը ոչնչացրին:

Ա գլխում Իսահակյանը ուշադրություն է հրավիրում հայ իրականության այլընտրանքային ընկալումների, մեկնաբանությունների վրա: Ուշագրավ է նաև հետևյալ հանգամանքը. Ա գլուխը սոսկ մեկ էջ է, որի վրա հեղինակը տալիս է այն տարածական և ժամանակային նկարագիրը, որի մեջ զարգանում են գործողությունները, և հեղինակը տեղեկություններ է հաղորդում հայերի, քրդերի, եզդիների մասին, որոնցից յուրաքանչյուրի համար այդ տարածքը հայրենիք է: Հետաքրքիր է նաև հետևյալ հանգամանքը. ոչ միայն Ա, այլև Բ գլուխը միայն մեկ էջով է ամբողջանում: Եթե Ա գլխում ներկայացվում է տեղանքը՝ պատմական կտրվածքով, ապա Բ գլխում այն ներկայանում է ժամանակային կտրվածքով. պատմական Հայաստանի տարածքում արդեն ոչ միայն հայեր, այլև քրդեր ու եզդիներ են ապրում: Բ գլուխն սկսվում է խնջույքի տեսարանով՝ Ուստա Կարոն բագարանցիների հետ քեֆ է անում Մրենի ձորում. «Ուստա Կարոն… աշխատել էր Բագարանում, աղբյուրի խողովակներն էր մաքրել, սուրբ Գևորգա մատուռը տանող սանդուղքի աստիճաններն էր նորոգել: Եվ

[17] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Ե., 1990, էջ 191:

Բագարանի իշխաններն էլ նրան պատվելու համար քեֆ էին սարքել… Նրա աջ ու ձախ կողմը ծալապատիկ նստել էին ենթակոմիտեի անդամներ… Ուստա Կարոն, փափախը շուռ տված դեպի ծոծրակը, կարմիր թաշկինակը ուսից ձգած… Մի քանի երիտասարդ տղերք ծառայում էին՝ ոտաց վրա կանգնած (էջ 43-44):

Իշխանների ներկայությունը փոխաբերական իմաստ ունի. ասել կուզի՝ սեղանին ներկա են անցյալը, ներկան և ապագան՝ մի քանի երիտասարդ: Վեպի սկզբում գրողը խոսում էր Կամսարականների տարածքի մասին, այնուհետև անդրադառնում Բագարանին: Հեղինակը ի սկզբանե այլաբերական համակարգ է զարգացնում. հայ-թուրք աշխատավոր մարդկանց բարեկամությունը, շուն սուլթանի ջարդերը, ֆիդայական հերոսների պայքարը, մյուս կողմից՝ ճամփորդություններ, հյուրասիրություններ, հայկական միֆեր, բանահյուսություն, ասույթներ, և այդ տարբեր ու տրոհված տարածության մեջ՝ Ուստա Կարոյի էպիկական կերպարը՝ իր արարչաստեղծ էությամբ, Բագարանը՝ հայ հեթանոս և քրիստոնյա իրականության միահյուսման վայրը, ուր պատմական ժամանակների մեջ հանդիպել են հեթանոս աստվածները, Երվանդունի և Բագրատունի արքաները, ինչպես նաև վեպի նոր հերոսը՝ Ուստա Կարոն՝ իր հայրենիքի ազատության համար պայքարի անհագուրդ ցանկությամբ և հայ ժողովրդի պայքարը գովերգող գուսան Փելեշով:

Վեպում Ուստա Կարոյի կերպարը միմյանց է շաղկապում նկարագրվող տարածքում բնակվող բոլոր այն անձանց, որոնց միավորում են անխոնջ աշխատանքը, կերտումն ու արարումը՝ անտեսելով նրանց ազգային պատկանելությունը. «- Վա՜հ, միթե Չավուշը թուրք է… - Մարդ զարմանք է մնում,- ասաց երեցփոխ Տոնոն, որ տիրացու գրագետ մարդ էր,- թե ինչպես մի այլազգ՝ էսօր-էսօր մեր Չավուշը, ախպոր պես ապրում է մի քրիստոնեի հետ, լավ հայի պես ապրում է մեր մեջ…» (էջ 46): «Չավո՛ւշ ջան, իմ ազիզ ախպեր… առանց քեզ ես մի օր չունիմ… դու էլ առանց ինձ… պռոշտի… Ուստա Կարո ջան, դու ինձի համար Սարը Մասիս ես» (էջ 45): Չավուշը նրան համեմատում է Մասիս սարի հետ, որը հայ ժողովրդի համար սրբության արժեք ունի: Վեպում, թվում է, Տոնոյի՝ գրագետ մարդու կողմից նման բնորոշումն արված է այլազգի Չավուշի մասին, և որպեսզի իր ասածը տարաբնույթ մեկնությունների առիթ չտա, Տոնոն միաժամանակ ճշտում է իր ասելիքը. «Իսկի էլ չի երևում, որ հայ չէ»: Շրջիկ Կայ-ծակի համոզմամբ, Չավուշը «հայից լավ է. դաշնակցական հոգի ունի» (էջ 46): Չավուշը ցանկանում է Անին շենացնել, այսինքն՝ նորոգել հայի թագավորությունը. «Չավո՛ւշ ջան, որ թե Անին շենցնեն, ի՞նչ կուտաս… լավ, լավ շենցնեն, շինեն, լավ նորովի ու հայու թագավորն էլ նստի էնտեղ, ի՞նչ կուտաս… Չավուշի պես լավ հայ ուր կրնաս գտնի» (էջ 47):

Ուստայի և Չավուշի կերպարների ստեղծման առումով հատկապես ուշագրավ են հեղինակային՝ առաջին հայացքից անկարևոր թվացող ինչ-ինչ ակնարկներ ևս, որոնք հաճախ խոր ենթատեքստ են պարունակում: Այսպես, իր հերոսների արտաքին որոշ նմանությունների զուգահեռները հեղինակն ամբողջացնում է խորիմաստ եզրակացությամբ. «Արդյոք երկար ժամանակ միասին ապրե՞լն էր, թե՞ ուրիշ մի խորհրդավոր ճակատագրական հիմք, որ պատճառ էր դարձել այդ երկուսի չափազանց նմանու-

թյանը… Չավուշը հագնվում էր հար և նման Կարոյին, միայն ժամացույց չուներ»: Իսկ «ճակատագրական հիմքը» թաքնված է պատմության մեջ:

Ակ-կոյունլի և կարակոյունլի քոչվորական ցեղերի արշավանքների հետևանքով սելջուկ թուրքերը, մոռացած իրենց եկվոր լինելը, հայերի հայրենիքն էին թուրքացնում՝ ստեղծելով թուրքական նոր հայրենիք…

Տարբեր ազգերի ներկայացուցիչներին միավորում է համակեցության հենքի վրա հանգիստ ապրելու, աշխատելու, բռնակալների դեմ պայքարելու ձգտումը. «…սուրբ ծրագիրը ասում է, թե բոլոր մարդիկ եղբայրներ են՝ հայ թուրք, քուրդ, որոնք ապրում են մի հողի վրա, էդ հողից են ծնվել ու սնվել, էդ հողի որդիքն են. կնշանակե՝ և բոլորս եղբայրներ ենք: Բայց արի ու տես, որ գազան, արյունախում սուլթանը էդ չի ուզում: Նա չի ուզում, որ ազգերը իրար հետ եղբոր պես ապրեն. էդ նրան ձեռնտուչ է… (էջ 47), …տվեք ինձի, շատ չեմ ասում մի հազար հազարի չափ զորք՝ սրտոտ տղամարդիկ՝ լավ ասպապ մտած, հրեղեն ձիերով, օսմանլու հողի էս գլխից մտնենք, ավլենք, սրբենք… Սուլթանին գցենք թախտից, գլխիվայր կախենք, ու Չավուշիս պես մեկ խղճով, ազնիվ, լավ սուլթան գտնեմ դնեմ թախտին…» (էջ 48):

«Ուստա Կարո» վեպը ժողովրդավարական-ժողովրդաիշխանական վեպ է, և գլխավոր հերոսները իրենց շրջապատով իրականացնում են ժողովրդավարական իշխանություն, ասել կուզի՝ այնպիսի իշխանություն, որի կենսունակությունը հեղինակը ցանկանում է տեսնել ապագայում: Գերագույն իշխանությունը Ուստա Կարոյի և նրա մտերիմ մարդկանց՝ վեպի հերոսների գեղարվեստական կերպարների աշխարհայեցողությունն է, իսկ վեպի հիմքում ընկած է հետևյալ գաղափարը. ապրել այնպես, որ նպաստավոր հող ստեղծվի հայ ժողովրդի հաջորդ սերունդների զավակների անվտանգության, բարեկեցության համար, և նրանց թողնել գործունեության այն կերպը, որը հնարավորություն կտա սկզբունքային պայքար մղել ավելորդ հեղինակությունների, քարացած դոգմաների, իրականության միակողմանի գնահատականների դեմ՝ հաշվի առնելով ժամանակի ռեալ իրականությունը: Տարբեր ազգերի ժողովուրդների բարեկամության խնդիրը կարևորելով՝ վեպի մեջ ստեղծագործական ողջ հենքով ծավալվում է այն գաղափարը, որ աշխատավոր մարդիկ՝ Ուստա Կարոն և Չավուշը, փոխլրացնում են միմյանց, քանի որ երկուսն էլ վստահ են, որ ամեն մեկը յուրովի, իր աշխատանքը կարևորելով՝ համակեցություն է ապահովում իր և այլոց համար: Վեպում հայտնվում է Կայծակը և հայտարարում, որ կառավարողները, չցանկանալով միասնական տեսնել տարածաշրջանը, տարված են իրենց նեղ, շահասիրական նկրտումներով. «Ես խաբար ունիմ, որ մեր օսմանլի ախպերտինքն էլ շատ սրված են էնոր դեմ. էս Սուլթանն էր, որ ամեն ինչ թմրեց» (էջ 47): Խնջույքի ընթացքում հայ և թուրք ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների վերաբերյալ տեսակետները հակասական են, քանի որ հենց իր էպիկական կերպարով Ուստա Կարոն մարմնավորում է իրականն ու երևակայականը՝ փորձելով ոչ միայն հայ, այլև թուրք մարդուն դուրս բերել տևական ճգնաժամից. «… գյուղացիք վաղուց գիտեին Ուստա Կարոյին, գիտեին, որ նրա սուտը ղորթից շատ է, և նա էնպես քամիներ է փչում, որի փոշին արևն է ծածկում…» (էջ 48):

Վեպի երկրորդ տարբերակի համար Իսահակյանի արխիվում տեղ են գտել տարբեր դիրքորոշումներ, նկատառումներ լրացնող բազմաթիվ և բազմապիսի նյութեր, փաստեր, որոնցում առկա են հակասական մոտեցումներ, եզրակացություններ: «Ուստա Կարոյի» բնագրերը և նյութերը վեպի շուրջ կազմում են Իսահակյանի արխիվի ողջ կազմի մեկ չորրորդը»[18],- հավաստում է գրականագետ Ավ. Իսահակյանը:

Ռեսի կերպարը վեպում Ուստայի համար այն է, ինչ Զենով Հովանինը «Սասնա ծռերում»՝ տեղեկատվություն փոխանցող: Նա սթափ հայացքով Ուստային իրազեկում է ռեալ իրավիճակի մասին. «Էդ ռուսն էր, էդ ինգլիզն էր, ֆրանցուզն էր, լամսանն էր, տալիացին էր… էդ խաչապաշտների աչքի առաջ հայու Ս. Խաչն ու սկիհը քցեցին աղբի մեջ, շների առաջ. էդոնք տեսան ու ծիծաղեցին» (էջ 318): Ասել կուզի՝ հայ ժողովուրդը սխալ է իր քաղաքական կողմնորոշումներում. նրա համոզմամբ, միայն քրիստոնյա, խաչապաշտները կարող են օգնել, և այդ պատճառով էլ Ռեսը այդօրինակ երկյուղածությամբ է վերաբերվում հայ ֆիդայիների՝ Անդրանիկի, Սերոբ փաշայի, Արաբոյի, Հրայրի և մյուսների կատարած ազգապաշտպան գործունեությանը: Վեպում ուշագրավ է նաև Հարութի կերպարը. նա հոռետես է, կյանքից դժգոհ և որևէ ակնկալիք չունի ապագայից: Ըստ էության՝ վեպը նաև լավատեսության և հոռետեսության պայքար է: Կերտելով Հարութի կերպարը, թվում է, գրողը ցանկացել է նաև իր համար պարզել հետևյալ հարցը՝ լավատե՞ս, թե՞ հոռետես. ո՞րն է ճիշտ և դեպի ո՞րը պետք է կողմնորոշվել:

«Մարդասպան, աշխարհասպան, աստվածասպան» Հարութը հայի արդարության պաշտպան չի գտնում ոչ երկնքում, ոչ էլ երկրի երեսին. «- Արևելյան կողմն աշխարհիս… գել ու Սուլթան նզովված էղնին, գետինն անցնին… - Երկնքի կողմն աշխարհիս, նզովված լինին արև ու աստված, չիք դառնան…» (էջ 540, 541): Ի մի բերելով վեպի առաջին տարբերակը՝ Իսահակյանը պայծառատեսորեն հասկանում է, որ «…վեպը չի արտահայտում իր մտահղացման հիմնական գաղափարը՝ «Հայկական հարցի» լուծումը, և ձեռնամուխ է լինում վեպի վերամշակմանը՝ ակնկալելով թե՛ ոճական, թե՛ կառուցվածքային էական փոփոխություններ»,- գրում է գրականագետ Ս. Սարինյանը[19]:

«Ուստա Կարո» վեպը ուշագրավ է նաև լեզվամտածողության առումով. այն հարուստ է առած-ասացվածքներով, թևավոր արտահայտություններով, որտեղ հատկապես մեծ տեղ ու դեր ունի առասպելական-բանահյուսական-դիցաբանական տարրը. «…ինչպես ծարավի հողը ծծում է ջուրը, այնպես էլ Ուստան խմել էր ու ծծել հայ և հարևան ժողովուրդների իմաստուն առակներն ու առածները, զրույցներն ու ասումները, որոնք դարերի մեջ արձագանք-արձագանք թռչելով ու բազմապատկվելով՝ եկել ու հասել են մինչև ներկա մարդը՝ ստեղծելով մի ամբողջ աշխարհայացք»,- գրում է Ավ. Իսահակյանը իր գրառումներից մեկում[20]: Այս ամենի միջոցով գրողն ասես փորձում է բացահայտել ոչ միայն հայ մարդուն,

---

[18] **Իսահակյան Ավ.,** Ուստա կարո, էջ 567:
[19] **Իսահակյան Ավ.,** Ուստա կարո, էջ 34:
[20] ԳԱԹ, Ավ. Իսահակյանի արխիվ, 298-II, էջ 27:

այլև մարդկությանն ուղեկցող այն բոլոր արհավիրքները, որոնք հաղթահարելով էլ հայ ժողովուրդը նախանշում է իր ապագան: Այս ամենը պատմության հոլովույթում ուղեկցել են հային՝ նրան հնարավորություն տալով ժամանակի և տարածության մեջ ինքնամաքրվել, դուրս գալ ճգնաժամերից, որոնց նա առնչվում է «ամբարիշտ, խառնակ» (Մ. Խորենացի) իրավիճակների պատճառով:

Վեպում Ավ. Իսահակյանին զբաղեցնող հիմնախնդիրը, այսպիսով, հզոր հայրենիքի ստեղծման գաղափարն է, և հեղինակը Ուստա Կարոյի կերպարի միջոցով ցանկանում է վերափոխել հայ մարդու՝ իրականության ընկալման կերպը: 1915 թ. եղեռն տեսած, Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով պատմական հայրենիքը կորցրած, այլ դեպքում մկրատված Հայաստանի՝ այլևայլ ժողովուրդների լծի տակ գտնվող հայ մարդը իրականության ընկալման ողբերգական կերպ ունի, մինչդեռ Ուստա Կարոն, անպայմանորեն չմերժելով ողբերգականը, փորձում է իմաստնացնել հայ մարդուն՝ նրան օժտելով ոչ միայն ողբերգության, այլև ծիծաղի միջոցով իրականությունը փիլիսոփայորեն ընկալելու կերպով: Այս առումով էլ հարկ է Ուստա Կարոյի կերպարը դիտարկել հետևյալ երեք ձևաչափերով՝ ա) խոսք՝ ասված տոնական հանդիսություններին, բ) ժողովրդական խոսակցական ոճ՝ համեմված առած-ասացվածքներով, դարձվածներով և փոխաբերություններով, թևավոր արտահայտություններով, չափազանցություններով, այլաբանությամբ, խոսքի դիցաբանությամբ. այս վերջինն ունի երկու սկիզբ՝ ընտանեկան-խորքային՝ ննջարանում օգտագործվող և ընտանեկան (տոհմային) ու ծիսական, գ) հրապարակային-շուկայական խոսքը, այսինքն՝ կենցաղայինը, որի միջոցով կանոնակարգվում են միջանձնային, ֆինանսատնտեսական հարաբերությունները: Եվ ասելիքն իր բազմաչափ դրսևորումներով՝ հանդիսավոր, պաշտոնական, առօրյա-խոսակցական՝ սրանց բնորոշ արտահայտությունները՝ ողբ, կատակ, ծաղր և այլն՝ խոսքային փոխանցումների պարույրով, ասես միաժամանակ, վեպում համակարգում է նաև Ուստա Կարոյի կերպարի բազմաչափությունը:

РОМАН А. ИСААКЯНА “УСТА КАРО”

ЗАКАРЯН М. Г.

Резюме

В романе “Уста Каро” А. Исаакян обращается к проблеме оценки человеческой сущности сквозь призму прошлого, настоящего и будущего, что дает возможность рассматривать отношение героя романа к жизненным перипетиям во временном и пространствен-ном измерении. В свете сказанного образ Уста Каро имеет важное значение в вопросе выявления духовного потенциала армянского народа.